Գյումրու քաղաքապետ
պարոն Վ. Սամսոնյանին
Քաղաքացի Արա Ռուբենի Հովսեփյանից
(ք.Գյումրի, Շիրակացու փ. 60շ.9բն., հեռ.044-766-466)

Մեծարգո քաղաքապետ

2024 թվականին լրանում է իմ հայրիկի՝ Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի՝ այժմ Շիրակի պետական համալսարան, երկարամյա ռեկտոր Կարապետ Ռուբենի Հովսեփյանի ծննդյան 100 ամյակը:

Նախատեսվում են այդ հոբելյանին նվիրված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես տեղեկացված եմ, որ Շիրակի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է կայացրել և դիմել է Ձեզ առաջարկությամբ, թույլատրելու Լենինականի պետական մանկավարժական ինստիտուտի նախկին շենքի պատին՝ ներկայիս Գյումրու տեխնոլոգիական կենտրոն, հասցեն Գայի 1, փակցնելու հետևյալ բովանդակությամբ հուշատախտակ. «Այս շենքում 1934-1988 թվականներին գործել է Լենինականի մանկավարժական ինստիտուտը, որը 1960–1994թթ. ղեկավարել է ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր, փիլիսոփա, բանաստեղծ Կարապետ Ռուբենի Հովսեփյանը»:

Ես՝ Արա Կարապետի Հովսեփյանս, հանդիսանալով Կարապետ Ռուբենի Հովսեփյանի միակ ժառանգը, արժևորում եմ այս նախաձեռնությունը և տալիս եմ իմ համաձայնությունը վերը նշված բովանդակությամբ հուշատախտակ փակցնելու համար, հուսալով Քաղաքապետարանի դրական որոշումը:

Կանխավ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ աջակցության համար:

Հարգանքներով՝

Արա Կարապետի Հովսեփյան

22.11.2023թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 28.11.2023 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 25520